


4466

Հայոց պատմութիւն

Մայրական
հիմ

2/29



Բիթիւ
1894

891.71-3
9-49

ՄԵՅՔԻԿԱՆ

Ս Ե Շ

(ՕՍՏՐՈԳՈՐՈՎԻԱ)

Թարգմանեցից

Տիրուհի Կոստանեանց

Թ. Ի Գ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձե, Կիկ Փ. ա. 21

1894

2003

891.71-3

0-71
ԱԿ.

ՄԵՅԹԱԿԱՆ

Ս Ե Ր

(ՕՍՏՈԳՈՒԿԱՐ)

1002
1003
1004
1005

Թարգմանեց
Տիրուհի Կոստանեան

Բ. Ի. Գ. Լ. Խ

Քպ. Մ. Չարաձե. || Տիպ. Մ. Շարաձ.

1894



1404

ՕՐԻՆԱԿԻՆ

9 1 0

Дозв. ценз. Тифлисъ, 26-го Апрѣля 1894 г.

ՄԱՅՐԱԿԱՆ ՄԵՐ



ըիստոսի ծնունդից
մի օր առաջ ի-
լիկնադէմին խո-
րը ձիւնով ծած-
կուած գիւղա-
կան ճանապար-
հով մէկ կին ըշ-
տապ շտապ գը-
նում էր: Նա հագել էր հին մուշտակ, եր-
կար ու մեծ թաղիքէ կօշիկներ և հաստ,
ըրդէ շալով փաթաթել էր գլուխը: Այդ-
կինը ձեռքում բռնել էր փոքրիկ կապոց,
որի հետ զգուշութեամբ էր վարվում և ու-
շադրութիւն չէր դարձնում մատների վե-

ըալ, որոնք ցըտից սառչում էին:

Սրբ նոր էր մայր մտել: Պարզ
երկնքի վերայ երևում էր բոլորակ լու-
սինը և աստղերը փալլում էին: Եղանա-
կը հանդարտ էր: Ճամբորդի ոտքերի
ճռճռոցը խիստ լսելի էր խուլ ճանա-
պարհի հանդարտութեան մէջ:

Կնոջ լոգնած և անհաւասար
քալլերից, տանջուած երեսից և կուացած
ուժից ընկած կազմուածքից կարելի էր
գուշակել, թէ նա վաղուց է որ ճանա-
պարհ է գնում և թէ նորա դիմաց-
կուն ոտները բաւական խրուել են
ձեան մէջ: Բայց այդ թափառելուն դեռ
էլի վերջ չկար... Կինը կանդնում, շունչ
էր քաշում, նալում էր իւր առաջն, ուր
անվերջանալի ճանապարհը կորչում էր ի-
սիկուայ մոխրագոյն մթութեան մէջ: Նա
մի ինչ որ բան էր մտածում և նորից
սկսում էր քալլել չոր ու ճռճռան ձեան
վերայով:

Քանի գնում աւելի մթնում էր և

ամեն կողմից աւելի մօտիկ վագում էին
դէպի ճամբորդը գիշերուայ ստուերները:

Յանկարծ մէկ ձայն լսուեց. ճամ-
բորդը չորս կողմը նայեց և երեսուն
քայլ հեռու տեսաւ մէկ գիշացու, որն
ուզում էր իրան հասնել: Գիշացին սահ-
նակում պառկած էր ցնցոտիների մէջ և
ամեն ըոպէ քաշքում էր խեղճ, նիկար
ձիուն, որը լոգնած, պոչը թափ էր տա-
իս, փոնչում էր և վախվխելով ու մանր
քալլերով առաջ էր գնում: Հասնելով
կնոջը, գիշացին նայեց նորա վերալ սուր
հայեացքով, գլխարկը հանեց, բարեեց նո-
րան և առանց մի խօսք ասելու, ճանա-
պարհը շարունակեց: Բայց մի ըոպէից
յետոյ նա կանգնեցրեց ձիուն և ձայն
տուեց.

Ա՛յ կին, արի նստիր, քեզ սահ-
նակով կըտանեմ. երևում է որ դադ-
րած ես:

Ա՛խ, շնորհակալ եմ, բարի մարդ,
ասաց կինը, և վազելով նստեց սահնակի

մէջ։ Շնորհակալ եմ սիրելիս, ոտքերս
բոլորովին կոտրտուեցին. ամբողջ օրը
ճանապարհ եմ գնում...

Հա, տեսալ որ դադրածութիւնից
այս ու այն կողմն ես ճօճվում։ Բայց դու
մըսեղից ես դալիս։

Մոսկուալից, սիրելիս, Մոսկուա-
լից։ Այնտեղ խոհարարութիւն եմ անում։
Խնդրեցի, որ տօներին ինձ ժամանակա-
ւոր արձակուրդ տան. իսկ իմ տեղս մի
ծանօթ կնոջ թողի, որը կերակուր եփել
շատ լաւ գիտէ. բայց դեռ էլի աղէս ու
խանումս ինձ զօռով թողին... Մինչև
Կիրերէև գիւղն երկաթուղով եկայ, իսկ
այնտեղից, ոտով ահա առաւօտուանից
գալիս եմ։

Իսկ դու ինքդ հեռո՞ւ տեղից ես,
հարցըց գիւղացին։

Ես հեռու գիւղից եմ, բայց գը-
նում եմ Դրօգդօվօ. կարելի է լսել ես
այդ գիւղի անունը։

Ի՞նչպէս չեմ լսել. մեր սահմա-

նումն է. մեզանից ութ վերստ միայն
հեռու է. գուցէ և էլ պակաս։

Ես ալդ տեղերը չգիտեմ, ասաց
կինը. առաջին անգամն եմ ես այս կող-
մերում...

Ուրեմն մի որևէ գործ ունիս։

Դ հարկ է, առանց գործի խօ չէ
լինի, աղջիկս Դրօգդօվում Բուլաւկին ազ-
գանունով վաճառականի մօտ աղախին
է... ինչ արած, աղքատութիւնը պակա-
սութիւն չէ... Ես զինուորի ալրի կին եմ.
Երեք տարի է արդէն, որ մարդս մեռել
է; Ես էլ ինչ անեմ. խօ գիտես, թէ մեր
ալրիներիս կեանքն ինչ է... պատէ պատ
շատ դիպալ և վերջապէս գնացի Մոս-
կուա, ուրիշ մարդկանց մօտ ծառայելու։
Ուզում էի աղջկանս Մարիամիկիս էլ
հետո տանել բայց չեղաւ. ով ինձ ներս
կ'առնէր նորա հետ միասին. ում պէտքն
է մէկ աւելորդ մարդու կշտացնել։ Ինձ
խորհուրդ տուին Մարիամիկիս տալ կար
անողի մօտ աշակերտուհի, բայց մեղքս

տուեց... Հենց այդ ժամանակ վրայ հասաւ Բուլաւկին վաճառականի կինը՝ «Աղջըկադ տօնըր ինձ, ասաց նա. Թողի իմ երեխալիս նայէ»: Մտածեցի և տուի: Ե՛հ, ասացի, թողի մնայ գիւղում, գիւղում աւելի ազատ է և այնպէս չի փչանայ ու երես առնի, ինչպէս որ բաղաքում: Բայց էլի ափսնս, որ աչքիս առաջը չէ մեծանում աղջիկս: Եւ Մարիամիկս ի՞նչ դաւակ կարող է լինել. նա միայն տասներկու տարեկան է: Դէհ մօր սիրտ է... չի լինում. Երբեմն շատ եմ մտածում ու դարդ անում... Մարիամիկս համար: Սկիզբ Բուլաւկինն ապրում էր մեր Կուզմենսկ գիւղում, իսկ յետոյ փոխուեց Դրօզդօվո: Լսելովս հիմայ նոքա գետին են առել և պանդոկներ են բացել Դրօզդօվում: Աղջիկս էլ նոցա հետ է, բայց շատ վաղուց Համբարձումից յետոյ նորա մասին էլ ոչ մի տեղեկութիւն չունեմ:

Երեխ առանց նորան ձանձրանում ես, ասաց գիւղացին:

Ե՛հ, ի հարկէ, սիրտս բոլորովին մաշուեց... շարունակ մտածում եմ թէ արդեօք առողջ է, կենդանի՞ է: Ուտելուց ու խմելուց կտրուել եմ և այնպէս տխուր եմ, որ էլ ասել չեմ կարող. գիշերները չեմ քնում... օրերս ախ ու վախով ու լացով եմ անցնում:

Ե՛հ, բան չկայ, Աստուած ողորմած է. շուտով կըտեսնես, կըմխիթարուես: Իսկ այդ կապոցում ի՞նչ կայ:

Քաղցրեղէն, գէրիս ու շալ: Բոլոր ժամանակ վախենում եմ, որ չտրուեմ ու չփչացնեմ... դէհ, չի լինի, Մոսկուալից եմ գնում, ի՞նչպէս կարելի է ընծայ չտանել. տօներին աղջիկս կ'ուրախանայ:

Ի հարկէ, առանց այդ չի լինի: Բայց այդ ի՞նչ է, կարծես բուք է սկսվում. գիշերն երեխ կըսաստկանայ, ասաց գիւղացին, նայելով երկնքի վերայ:

Իսկ Մոսկուայում ի՞նչպէս էք ապրում. նեղութիւն շատ էք քաշում...

Նայելով թէ ինչ աղաների մօտ
ենք ծառայում. տեղ կայ, լաւ է, տեղ
կայ, վատ: Իսկ դու, սիրելիս, Բուլաւկին-
ների մասին ոչինչ չեմ լսել. կարելի է
և որոց մօտ եղել ես:

Ասենք չեմ եղել, բայց լսել եմ.
մեր գիւղացիներն անտառից նորան փայտ
տարան շինութեան համար և ասում
էին թէ բաւական կարողութիւն ունի:

Կարելի է աղջկաս մասին էլ մի
բան ասացին:

Չեմ լիշում, կարծեմ ոչինչ չեն
ասել...

Գիւղացին կըկին նայեց երկնքի վե-
րայ և ամուր քաշեց իւր ձիու սանձը:

Կէս ժամից յետոյ դէմից երևցան
գիւղի կրակները. ծուխի հոտը տարա-
ծուեց օդի մէջ և լսուեց շների հաշոցը:

Դու գիշերս մեզ մօտ կ'աց, ասաց
գիւղացին. այս ժամանակ էլ ուր պէտք
է գնաս. ճանապարհու էլ կարճ չէ. ուժ
վերստ կլինի: Ա. շ շուտով կ'երևի իմ

խրճիթո. անպատճառ մելոնք ինձ հիմայ
սպասում են. էս էլ քաղաքից եմ գնում,
նոցա համար ընծաներ եմ տանում: Դու
մեզ մօտ հանգստացիր, իսկ առաւօտեան
վաղ Աստուած կանչելով ճանապարհ ընկիր:

Չէ, ախալէր ջան, ինչպէս կարելի է,
ինչ ես ասում. միւնոյն է, ես գիշերը
չեմ քնի ու աւելի կըտանջուեմ... Ե՛հ,
ինչպէս որ լինի տեղ կըհասնեմ, Աս-
տուած ողորմած է: Նատ շնորհակալ եմ,
որ ինձ մինչև այստեղ բերիր...

Ճշմարիթ, լաւ կըլինի որ մնաս:

Միայն ութ պերստ է մնացել և
դու ասում ես՝ կ'աց, կ'աց: Հը՛, ես թե-
առած կըթռչեմ. էլ ինչ քնել. ախր ես
երկու տարի է չեմ տեսել նորան, իմ
հոգեակիս. սիրտս թրթռում է ուրախու-
թիւնից: Շտապում եմ, այսօր երկաթու-
ղուց իջնելուց յետոյ երեք վերստ վա-
զելով էի գալիս որ համնեմ, իսկ դու
ասում ես՝ «գիշերը կաց մեզ մօտ»: Ես
կէս գիշերին արդէն այնտեղ կըլինեմ և

Ժամանակ կունենամ թէ հանգստանալու, թէ լաց լինելու ուրախութիւնից և թէ նայելու ու մխիթարուելու իմ աղջկանովս։ Կըզուգեմ նորան. իմ սիրունիկս, նոր դէրիս կըհագնեմ և մենք միասին կ'երթանք առաւօտուալ ժամին։ Ի՞նչ քնել, ի՞նչ ես խօսում։

Դու գիտես, այդ քո գործն է, բայց դեռ մեր խրճիթը մտիր, տաքացիր մի քիչ։ Ես նորա համար եմ ասում մընաս, որ վախում եմ թէ բուքն աւելանալ. այն ժամանակ մի փորձանքի կըհանդիպես և գուր տեղը կըկորչես. յանկարծ մի փոս կ'ընկնես և պրծաւ..

Կինը մտաւ խրճիթ, մուշտակը հանեց և իսկոյն էլի հագաւ. Նա էլ համբերութիւն չունէր. ինչքան համոզում էին տանտէրերը, որ մնայ, բայց նա չը լսեց և խաչակնքելով սուրբ պատկերի առաջ, շնորհակալութիւն յայտնեց նոցա և ճանապարհ ընկաւ։ Գիւղացին էլ իրան կարճ մուշտակը հագաւ, փա-

փախը ծածկեց և գուրս եկաւ, որ նորան ճանապարհ գցէ։ Նա կնոջը գիւղից գուրս հանեց, երկար բացատրեց նորան ճանապարհը, մանրամասն պատմեց, թէ ո՛ր կողմը պէտք է գնալ, որտեղում ծռուել. և յետոյ մնաս ըարև ասաց, ցանկալով նորան յաջողութիւն։ Բայց նա այդտեղ էլի մէկ անգամ կըկնեց, որ լաւ կ'անէր, եթէ մնար, որովհետև քամին սաստկանում էր և կարող էր շուտով փոթորիկ բարձրանալ. Երկինքը ծածկուած էր մուգ մոխրագոյն ամպերով։ Ակսեց ձիւն դալ։

Կինը փայտ առաւ ձեռքը, որ կարողանայ ձիւնով ծածկուած ճանապարհը շօշափել։ Դաշտ գուրս գալով, նա զգաց, որ գիւղացին ուղիղ էր ասում. բուքը քանի գնում սաստկանում էր. բայց այդ նորան չէր լուսահատեցնում։ Նա համարձակ առաջ էր գնում, քաջալերուած այն լուսով, որ շուտով կըտեսնի իւր սիրելի աղջկան։ Ութ վերսա տա-

րածութիւնը նորան այնքան չնչին էր
երեսւմ համեմատելով իրան անցած եր-
կար ճանապարհի հետ, որ նա մտածում-
էր թէ շարժէր դորա համար ուշանալ-
եւ նա ուրախ ու զուարթ գնում էր,
չնայելով ցուրտ քամուն և ձեանը, որ
թափում էր նորա վերայ: Այդ մեռե-
լային լուսթեան մէջ նա իրան մենակ
վատ էր զգում: Ճանապարհին ոչ մէկ
մարդ չէր պատահում. երբեմն միայն հե-
ռու թուփերի տակից փայլում էին գալ-
ի ագահ աչքերը և նապաստակն ինչ որ
բանից վախեցած վազում էր այս ու այն
կողմը:

Լուսինը բոլորովին ծածկուեց ամ-
պերի տակ: Քամին սաստկացաւ և վեր-
ջապէս այնպէս ուժեղ կերպով փշեց, որ
խեղճ ճամբորդը հազիւ ոտքերի վերայ
կանգնած մնաց:

Այդ միջոցին քամին ամպերի նման
ձիւնն այնպէս պլատեց օդի մէջ, որ մոզի
ըագոյն երկնքից երկցած թոլլ լուսն է-

ծածկուեց բոլորովին: Փոթորիկ բարձրա-
ցաւ և այնպիսի սարսափելի ձայներ սկսեց
հանել, որ ամեն մէկ գազան ահ ու դո-
ղի մէջ կ'ընկնէր անպատճառ այդ ձալ-
նը լսելիս:

Սկզբում ճամբորդն զգում էր, որ
քամին իրան երեսին է փչում միայն,
բայց շուտով համոզուեց, որ ամեն կող-
մից նոյն ուժով դժուարացնում է նորա
ճանապարհը: Քամու հետ միասին թա-
փուող ձիւնը նորա աչքերն իրար էր
կպցնում և մէջքին ու կողքերին խփում
էր ուժեղ կերպով: Երբեմն, երբեմն կի-
նը կանգնում էր, որ շունչ առնի և ե-
րեսը դարձնում էր քամուց, որ գոնէ մի
ըոպէ պաշտպանուի ծակծկող ձիւնից:
Բայց զնուր. ամեն կողմից մեծ ուժով ձիւ-
նը թափում էր և ասեղի նման ծակծ-
կում էր խեղճ կնոջ երեսը: Քամին որո-
տում էր: Երկինքը կարծես սեացաւ: Խո-
րին մութը պատեց...

Յանկարծ կինը զգաց, որ նորա ոտ-

քերի տակ էլ ամուր գետին չէ. նա մինչև ծունկերը թաղուեց ձիւնի մէջ. նա սարսափած ետ վաղեց և սկսեց թափառել, փնտռելով կորցրած ճանապարհը։ Շուտով նա բոլորովին շփոթուեց և շգիտէր, թէ որ կողմը գնար։ Մի քանի քայլ էլի առաջ գնալով, նա բաղդառապալէս դիպաւ մէկ փոքրիկ սեան, որ սովորաբար ձմեռը տնկում են գիւղերի ճանապարհների վերալ, որ ոտով ու կառքով անցնողները ճանապարհը չկորցնեն։ Այդտեղ ճամբորդը փայտով ձիւնն ետ տարաւ ու կամաց-կամաց սկսեց գնալ։

Բուքն առաջուայ պէս շարունակվում էր։ Կինն արդէն երկու ժամ է որ ճանապարհին էր, բայց չգիտէր, թէ որ կողմը գնար։ Յանկարծ նա աեսաւ երեք բարտի ծառ, որոնց մասին գիւղացին լիշեց, ասելով որ այդ տեղում պէտք է ծուռել դէպի ձախ... ճամբորդը լերաւի ծռուեց դէպի ձախ, խաչակնքեց և բոլոր ոլքերն հաւաքելով առաջ գնաց։ Նա

զգում էր, որ շատը գնաց, քիչը մնաց և չէր զղում, որ գիշերով ալդպիսի վտանգաւոր ճանապարհն անցաւ։

Հազիւ էր շունչ քաշել խեղճ կինն, երբ յանկարծ ընկաւ մէկ վոսի մէջ։ Շատ մեծ չարչարանքով այնտեղից դուրս դալով, բարձրացաւ մէկ բլուրի վերալ, որտեղ քամին աւելի ուժեղ էր փչում. նա սկսեց ճանապարհը փորփրել փայտով, ոտքերով, ձեռքերով, բայց ամեն տեղ խոր ու փափուկ ձիւն էր։ Նա սկսեց պտըտուել այս ու այն կողմը. նորից ընկաւ մի ինչ որ վոսի մէջ և հազիւ կառողացաւ այնտեղից դուրս գալ։ Սառել էր նորա երեսը, սառել էին և ոտքերն, իսկ ձեռքերը քոլորովին փայտացել էին Ամբողջ մարմնով դողում էր նա. յոդնածութիւնից նորա աչքերը փակվում էին և քունը սաստիկ տանում էր։

«Կըսառչեմ» ճամբորդի մտքիցն անցաւ, և համարեա վազելով առաջ գնաց, որ քունն անցնի ու տաքանայ, բայց մի



ըոպէից լետոյ նա թուլացած վայր ընկաւ։
Կարծես երազում, թէ իսկապէս, նա
լսեց զանգի ձայն. թէ ո՞ր կողմիցն էր գա-
լիս այդ ձայնը, նա չկարողացաւ իմանալ։
Այնու ամենայնիւ այդ ձայնը նորան այն-
պէս յոյս տուեց, որ նա բարձրացաւ և
ճօճուելով էլի մի քանի քայլ առաջ գը-
նաց։ Դարձեալ զանգակ... վչեց քամին
ուժեղ կերպով և նորից վայր զցեց գետ-
նին ուժից ընկած ճամբորդին։ Նա սկսեց
օգնութեան կանչել... Այդ ժամանակ նո-
րա գլուխը պտըտուեց, աչքերը մթնեցին
և նա ուշաթափուեց։

Դրօգդովում առաւօտուայ ժա-
մի զանգակներն էին հնչեցնում։ Ժողո-
վուրդը գնում էր եկեղեցի, որը գիւղա-
ցիների խրճիթներից մէկ վերստաչափ
հեռու էր շինուած։ Ճանապարհից դուրս,
գիւղեց քիչ հեռու, երկու գիւղացի մէկ
ձայն լսեցին։ Նոքա այն կողմը գնացին

և գտան ձիւնով ծածկուած մէկ կնոջ,
որն ունէր հին մուշտակ և թաղիքէ կօ-
շիկներ։ Այդ կինը պառկած էր համա-
րեա մեռած և կուրծքին ամուր սեղմել
էր մի կապոց։ Գիւղացիները տարան նո-
րան ժամկոչի սենեակը և շուտով ուշքի
բերին։

Թէև նորա մէկ ձեռքի մասները
ցուրտը տարել էր, բայց կինը կտրծես
շատ քիչ էր մտածում այդ մասին։ Լսե-
լով որ իրանից երկու քայլ հեռու Դրօգ-
դովի եկեղեցում առաւօտուայ ժամ են
ասում, նա վազելով ներս ընկաւ այն-
տեղ և լաց եղաւ, տեսնելով նիհար,
տասներկու տարեկան մի աղջկայ, որը
կանգնած ժողովրդի հետ աղօթում էր։

Այդ կինը մեր ճամբորդն էր, իսկ
աղջիկը՝ նորա աղջիկն էր։



28

9466

Նոյն թարգմանչինն է

Ա. Ա.

| | | | | | |
|----|--------------------------------------|---|---|---|----|
| 1 | Յովհան Գուտառէնբէրդ | . | . | — | 15 |
| 2 | Դոկտօր Զէններ | . | . | — | 20 |
| 3 | Մանկական Թատրօն | . | . | — | 1 |
| 4 | Իբսէնի, Նօրա | . | . | — | 30 |
| 5 | Լեր Արքայ | . | . | — | 5 |
| 6 | Գայլ | . | . | — | 3 |
| 7 | Թուղթ և Հին Գրքեր (Օստրօ- գօրսկի) | . | . | — | 5 |
| 8 | Տիրոլացի Աղջեկ և Ժշտ | . | . | — | 5 |
| 9 | Մեր Պապի Գաւազանը | . | . | — | 5 |
| 10 | Անհանգիստ Գիշեր | . | . | — | 5 |
| 11 | Որսի գնդակ | . | . | — | 5 |
| 11 | Մայրական սէր | . | . | — | 5 |



ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

2013

